ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 313-Ա/2 09.03.2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՄ. 647 - Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» հմ. 647-Ա/Ք հրամանի՝

1) հավելված 2-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի» ցանկում՝

ա. «042 Իրավունք» բաժնի «042101.00.7 Իրավագիտություն» մասնագիտության 3-րդ սյունակի «042101.10.7 Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» թվերը և բառերը փոխարինել «042101.15.7 Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» թվերով և բառերով.

բ. «056 Մաթեմատիկա և վիճակագրություն» բաժնի «056101.00.7 Մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ սյունակի «056101.08.7 Մաթեմատիկա և կիրառություններ» թվերը և բառերը փոխարինել «056101.09.7 Մաթեմատիկա և կիրառություններ» թվերով և բառերով:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X